ԵԴ2/3274/02/24

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀԱՅՑՆ ԱՌԱՆՑ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԹՈՂՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

15.05.2024թ. ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Գ.Մազմանյանս քննարկելով թիվ ԵԴ2/3274/02/24 քաղաքացիական գործով հայցն առանց քննության թողնելու հարցը,

Պ Ա Ր Զ Ե Տ Ի

«Պրեմիում Մաշինների էյ էմ» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Ն.Բաբայանը 26.04.2023թ. հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ պատասխանող ՀՀ պաշտպանության նախարարության՝ ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կ.Բրուտյանի՝ 25.03.2024թ. թիվ 111 որոշումն անվավեր ճանաչելու և այն վերացնելու պահանջի մասին:

Հայցադիմումը մակագրվել է դատավոր Գ. Մազմանյանին՝ 26.04.2024թ.:

Հայցադիմումը հանձնվել է դատավոր Գ.Մազմանյանի աշխատակազմին՝ 30.04.2024թ.:

Դատարանի՝ 06.05.2024թ. որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ և որոշվել է. գործի քննության արդյունքում կայացվող եզրափակիչ դատական ակտը հրապարակել ՀՀ դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով՝ 05.06.2024թ.:

Դատարանի՝ 06.05.2024թ. որոշմամբ հայցվորի ներկայացուցչի միջնորդությունը՝ գործը դռնփակ դատական նիստում քննելու մասին, բավարարվել է:

Դատարանի՝ 06.05.2024թ. որոշմամբ պատասխանողից պահանջվել են ապացույցներ:

Դատարանի՝ 06.05.2024թ. որոշմամբ հայցվորի ներկայացուցչի միջնորդությունը՝ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին, բավարարվել է և որոշվել է. արգելել պատասխանող ՀՀ պաշտպանության նախարարությանը կատարել որևէ գործողություն՝ ուղղված հայցվորին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն, թիվ «ՀՀ ՊՆ-ՓՆՄԱՊՁԲ-24-20/3» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում հայցվորի կողմից ներկայացված հայտի ապահովման գումարի գանձումը, այդ թվում՝ բանկային երաշխիքի վճարում պահանջելուն, ինչպես նաև արգելել երրորդ անձանց կատարել որևէ գործողություն՝ ուղղված թիվ «ՀՀ ՊՆ-ՓՆՄԱՊՁԲ-24-20/3» ծածկագրով գնման ընթացակարգի

շրջանակներում հայցվորի կողմից ներկայացված հայտի ապահովման գումարի մասով տրված բանկային երաշխիքի վճարում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը դատավարության ցանկացած փուլում հայցը կամ դիմումը թողնում է առանց քննության, եթե՝ նույն կամ այլ դատարանի կամ արբիտրաժի վարույթում առկա է նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն փաստական հիմքերով գործ:

«Datalex» դատական տեղեկատվական համակարգի տվյալների համաձայն՝ «Պրեմիում Մաշինների Էյ Էմ» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Ն.Բաբայանը 24.04.2024թ. հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ պատասխանող ՀՀ պաշտպանության նախարարության՝ ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կ. Բրուտյանի՝ 25.03.2024թ. «Պրեմիում Մաշինների Էյ Էմ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ թիվ 111 որոշումն անվավեր /ոչ իրավաչափ/ ճանաչելու և որպես հետևանք՝ հայցվորին դրանով սահմանված հետևանքներից ազատելու պահանջների մասին:

Հայցադիմումը մակարգվել է դատավոր Վ.Թորոսյանին՝ 25.04.2024թ.:

Դատարանի /դատավոր Վ.Թորոսյան/՝ 26.04.2024թ. որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Վերոգրյալի հիման վրա՝ Դատարանն արձանագրում է, որ Դատարանի (դատավոր Վ.Թորոսյան) վարույթում առկա է նույն անձանց՝ հայցվոր «Պրեմիում Մաշինների Էյ Էմ» ՍՊ ընկերության և պատասխանող ՀՀ պաշտպանության նախարարության միջև, նույն առարկայի՝ ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կ.Բրուտյանի՝ 25.03.2024թ. թիվ 111 որոշումն անվավեր /ոչ իրավաչափ/ ճանաչելու, և միևնույն փաստական հիմքերով թիվ ԵԴ2/3224/02/24 քաղաքացիական գործը:

Վերոնշյալը հաշվի առնելով և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Դատարանը գտնում է, որ թիվ ԵԴ2/3274/02/24 քաղաքացիական գործով հայցը պետք է թողնել առանց քննության՝ այլ դատարանի վարույթում նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն փաստական հիմքերով թիվ ԵԴ2/3224/02/24 քաղաքացիական գործի առկայության հիմքով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցն առանց քննության թողնելու կամ գործի վարույթը կարճելու դեպքում դատական ծախսերի փոխհատուցման պարտականությունը դրվում է հայցվորի վրա, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի:

Քննությունն առնելով պետական տուրքի հարցը և հաշվի առնելով, որ հայցվորը նախապես վճարել է պետական տուրքի գումարը, իսկ հայցը թողնվում է առանց քննության, ուստի Դատարանը գտնում է, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում իր նախաձեռնությամբ կարող է վերացնել հայցի ապահովման միջոցը:

Դատարանը, նկատի ունենալով, որ հայցը թողնվում է առանց քննության, գտնում է, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ 06.05.2024թ. որոշմամբ ձեռնարկված հայցի ապահովման միջոցը պետք է վերացնել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ, 110-րդ, 134-րդ, 180-րդ, 181-րդ, 199-200, 360-362 հոդվածներով, դատարանը.

ՈՐՈՇԵՑ

Թիվ ԵԴ2/3274/02/24 գործով «Պրեմիում Մաշինների Էյ Էմ» ՍՊ ընկերության ընդդեմ պատասխանող ՀՀ պաշտպանության նախարարության՝ ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կ.Բրուտյանի՝ 25.03.2024թ. թիվ 111 որոշումն անվավեր ճանաչելու և այն վերացնելու պահանջի մասին, հայցը թողնել առանց քննության՝ նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն փաստական հիմքերով թիվ ԵԴ2/3224/02/24 քաղաքացիական գործի առկայության հիմքով:

Պետական տուրքի հարցը համարել լուծված:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ 06.05.2024թ. որոշմամբ ձեռնարկված հայցի ապահովման միջոցը, որի համաձայն՝ պատասխանող ՀՀ պաշտպանության նախարարությանն արգելվել է կատարել որևէ գործողություն՝ ուղղված հայցվորին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն, թիվ «ՀՀ ՊՆ-ՓՆՄԱՊՁԲ-24-20/3» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում հայցվորի կողմից ներկայացված հայտի ապահովման գումարի գանձումը, այդ թվում՝ բանկային երաշխիքի վճարում պահանջելուն, ինչպես նաև արգելվել է երրորդ անձանց կատարել որևէ գործողություն՝ ուղղված թիվ «ՀՀ ՊՆ-ՓՆՄԱՊՁԲ-24-20/3» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում հայցվորի կողմից ներկայացված հայտի ապահովման գումարի մասով տրված բանկային երաշխիքի վճարում, վերացնել:

Որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման պահից յոթնօրյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ **Գ. ՄԱՋՄԱՆՅԱՆ**